Պարունակում է մրցութային գաղտնիք

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 42

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի 2009թ. հունիսի 12-ին ժամը 14:00-ին ՀՀ Կառավարության նիստերի դահլիճում կայացած նիստի

Նիստը նախագահում էր.

ՀՀ Վարչապետ, «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի նախագահ Տիգրան Սարգսյանը

Մասնակցում էին՝

Կառավարման խորհրդի անդամներ.

Արմեն Գևորգյանը	ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար
Տիգրան Դավթյանը	ՀՀ ֆինանսների նախարար
Ներսես Երիցյանը	ՀՀ էկոնոմիկայի նախարար
Հրանտ Բեգլարյանը	ՀՀ տրանսպորտի նախարարի տեղակալ
Տիգրան Պետրոսյանը	ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ
Արման Ոսկանյանը	«Տավուշի զարգացման» ՀԿ-ի ներկայացուցիչ
Շիրակ Միքայելյանը	«Աշխատանք և հայրենիք» ՀԿ-ի լիազոր ներկայացուցիչ
Կարեն Զադոյանը	«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ

Կառավարման խորհրդի դիտորդներ.

Ալեքս Ռասինը	Հայաստանում ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գրասենյակի տնօրեն
Ռուբեն Խաչատրյանը	«Հայաստանում վայրի բնության և մշակութային արժեքների պահպանության» հիմնադրամի տնօրեն, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի բնապահպանական դիտորդ

Նիստից բացակայում էին.

Վահրամ Ներսիսյանցը	ՀՀ Նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական, «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի փոխնախագահ
Գերասիմ Ալավերդյանը	ՀՀ գյուղատնտեսության նախարար

Գուրգեն Սարգսյանը	ՀՀ տրանսպորտի նախարար
Պողոս Շահինյանը	«Ճանապարհային անվտանգության ազգային խորհուրդ» ՀԿ-ի նախագահ
Վիկտոր Ենգիբարյանը	«Հայաստանի եվրոպական շարժում» ՀԿ-ի նախագահ

Նիստին հրավիրված էր.

Անդրանիկ Անդրեասյանը	ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ

Նիստին մասնակցում էին նաև.

Արա Հովսեփյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն
Նորա Մարտիրոսյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու, կառավարման խորհրդի քարտուղար
Հակոբ Պետրոսյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի գյուղական ճանապարհների վերականգնման ծրագրի ղեկավար
Արմինե Սիմոնյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի բնապահպանության և սոցիալական ազդեցության գնահատման ծրագրի ղեկավար
Սիմոն Ղոնաղչյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության պետ
Ռիմա Եգանյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության առաջատար մասնագետ
Մարինա Քուշքյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի արձանագրային բաժնի աշխատակից
Խաչատուր Ադումյանը	Թարգմանիչ

Նիստը բացեց ՀՀ Վարչապետ, «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի նախագահ Տիգրան Սարգսյանը:

Նիստի օրակարգում ներկայացվել էին հետևյալ հարցերը.

1. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի շրջանակներում յոթ ինքնահոս համակարգերի կառուցման մրցութային փաստաթղթերի վերաբերյալ ստացված ՀՄԿ առարկությունների նամակի քննարկում և ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի՝ ինքնահոս համակարգերի կառուցման ընթացքի վերաբերյալ հետագա քայլերի հաստատում:

2. ՀՄԿ-ին ներկայացվող 12-րդ Հատկացման հայտի և դրան կցվող ներքոնշյալ փաստաթղթերի քննարկում և հաստատում.

   ա/ Հատկացման հայտ և եռամսյակային ֆինանսական հաշվետվություն,
   բ/ Հատկացման նախապայմանների հաշվետվություն,
   գ/ Աշխատանքային պլան,
   դ/ Ամփոփ եռամսյակային հաշվետվություն և ցուցանիշների վերահսկման աղյուսակ,
   ե/ Գնումների կատարման հաշվետվություն և գնումների պլան:

3. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի շրջանակում ընդգրկված Արմավիրի և Թալինի մայր ջրանցքներում իրականացվող շինարարական աշխատանքների իրականացումը Համաշխարհային բանկին փոխանցելու և Վեց մայր ջրանցքների վերականգնման աշխատանքների երկրորդ փաթեթի մեջ ընդգրկված աշխատանքների նոր ծավալների վերաբերյալ ներկայացված տեղեկատվության քննարկում և հաստատում:

4. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի շրջանակում նստվածաբանության, բետոնի և ջրի կառավարման մասնագետների կողմից ներկայացված հաշվետվությունների ներկայացում:

5. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի Գյուղական ճանապարհների վերականգնում ենթածրագրի, Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածներ և Ջրից դեպի Շուկա բաղադրիչների գործընթացի որակական գնահատման պայմանագրի նախագծի քննարկում և հաստատում:

6. Այլ հարցեր՝

   ա/ Հայաստանի Հանրապետությունում ճանապարհաշինության բնագավառում եվրոպական ստանդարտների անցման համար անհրաժեշտ ուսումնասիրությունների իրականացման ժամկետների և գումարների վերաբերյալ տեղեկատվության ներկայացում:

   բ/ ՀՄՀ-Հայաստան ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ հողի առգրավման գործընթացի առաջընթացի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում:

Արա Հովսեփյանն առաջարկեց Օրակարգի 2-րդ հարցը ներկայացնել որպես առաջին, իսկ 4-րդ հարցի քննարկումը տեղափոխել Կառավարման խորհրդի հաջորդ նիստ:

Առաջարկն ընդունվեց և Օրակարգը հաստատվեց միաձայն:

Օրակարգին կից ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի կողմից կառավարման խորհրդի անդամներին ներկայացվել էր նաև յուրաքանչյուր հարցի վերաբերյալ համապատասխան տեղեկանք՝ կից փաստաթղթերով:

Նիստի ընթացքում.

Օրակարգի 2-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ 2009թ. հունիսի 10-ին տեղի է ունեցել ՀՄԿ խորհրդի նիստ, որի ընթացքում խորհուրդն անդրադարձել է ՀՄԿ ծրագրի շրջանակում Հայաստանի հետ հետագա աշխատանքին: Նիստի արդյունքներով ճանապարհների կառուցման ու վերականգնման

ծրագրի ֆինանսավորումը ՀՄԿ-ի կողմից չի վերսկսվի: ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը նախատեսում էր 2009թ. հուլիս-սեպտեմբեր ամիսներին ճանապարհաշինության առաջին փաթեթով նախատեսված աշխատանքների շարունակման համար ՀՄԿ-ից ստանալ մոտ 19մլն. ԱՄՆ դոլար, սակայն հաշվի առնելով վերոնշյալ խորհրդի որոշումը՝ նպատակահարմար է գտնում հերթական հատկացման հայտը ՀՄԿ-ին ներկայացնել առանց ճանապարհաշինության առաջին փաթեթի համար նախատեսված գումարների, միաժամանակ ավելացնելով, որ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը պատրաստ է ՀՄԿ-ին ներկայացնել հայտ՝ ներառելով նաև այս բաղադրիչը, եթե Կառավարման խորհուրդը նմանատիպ դիրքորոշում հայտնի:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը դիմեց ՀՄԿ ներկայացուցիչ Ալեքս Ռասինին՝ ստանալու վերջինիս պաշտոնական պարզաբանումը այս հարցի կապակցությամբ:

Ալեքս Ռասինը հայտնեց, որ համամիտ է Արա Հովսեփյանի հետ և նպատակահարմար չի գտնում ՀՄԿ-ին ներկայացվող հայտում ներառել ճանապարհաշինության Առաջին փաթեթի համար անհրաժեշտ գումարները: Ճիշտ է ՀՄԿ-ն դեռևս ՀՀ Կառավարությանը չի ուղարկել պաշտոնական նամակ՝ հայտնելով իր այդ որոշման մասին, այնուամենայնիվ ՀՄԿ խորհրդի նիստի մամլո հաղորդագրությունից ակնհայտ է, որ ՀՄԿ-ն չի ֆինանսավորելու ճանապարհների շինարարությունը:

Քննարկումներից հետո **միաձայն որոշվեց՝** հաստատել ՀՄԿ-ին ներկայացվող 12-րդ հատկացման հայտը և դրան կցվող փաստաթղթերը՝ առանց ճանապարհաշինության Առաջին փաթեթի ֆինանսավորման համար նախատեսված գումարների:

Օրակարգի 1-ին հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Արա Հովսեփյանը տեղեկացրեց, որ ՀՄԿ-ին ներկայացված Յոթ ինքնահոս համակարգերի մրցութային փաստաթղթերի վերաբերյալ ՀՄԿ-ի կողմից ներկայացվել է մերժում, որի համաձայն Հազարամյակի մարտահրավեր-Հայաստան ծրագրից դուրս են թողնվել յոթ ինքնահոս համակարգերից երեքը՝ Մեզրիի, Հալավարի և Սպիտակի ինքնահոս համակարգերը: Որպես նշված ինքնահոս համակարգերի մրցութային փաստաթղթերը չհաստատելու պատճառ ՀՄԿ-ն նշում է տեխնիկական պատճառները և նախագծերում առկա թերությունները:

Արա Հովսեփյանը տեղեկացրեց, որ այդ մասին ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը պատրաստել և կառավարման խորհրդին է ներկայացրել համապատասխան մանրամասն տեղեկանք, որտեղ ամրագրված են ինչպես ՀՄԿ-ի կողմից բարձրացված թերություններն ու խնդիրները, այնպես էլ այն լուծումներն ու պարզաբանումները, որոնք ՀՄՀ-Հայաստանը նախկինում ներկայացրել է ՀՄԿ-ին:

Արա Հովսեփյանը նշեց, որ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը պատրաստ է շարունակել աշխատանքը երեք ինքնահոս համակարգերի վրա, այդ թվում վերանայել առկա նախագծերը և պարզաբանումներ տրամադրել ցանկացած տեխնիկական հարցի վերաբերյալ, եթե կառավարման խորհուրդը նման որոշում կայացնի: Ներկայումս, ծրագրով նախատեսված ժամկետներից չուշանալու և մնացած չորս ինքնահոս համակարգերի կառուցումը ևս հարցականի տակ չդնելու համար, ՀՄՀ-Հայաստանն արդեն իսկ հայտարարել է ինքնահոս համակարգերի կառուցման մրցույթը չորս համակարգերի համար: Միաժամանակ առաջարկվեց ՀՄԿ-ի մերժումն ընդունել ի գիտություն և շարունակել ծրագիրը չորս ինքնահոս համակարգերով:

Արման Ոսկանյանը նշեց, որ ըստ էության վերջին ժամանակներում ՀՄԿ-ն պարբերաբար մերժում է այս կամ այն ծրագրի ֆինանսավորումը և կրճատում է այն միջոցառումների ցանկը, որոնց համար նախատեսված էր գումար հատկացնել, ուստի առաջարկեց Ալեքս Ռասինին ներկայացնել նախատեսվող մերժումների ցանկը՝ հետագա քայլերը նախապես իմանալու համար:

Ալեքս Ռասինը պատասխանեց, որ ՀՄԿ-ն հավատարիմ է Համաձայնագրով ամրագրված սկբունքներին և ծրագրին, որը ներկայումս շարունակում է գործել Ոռոգվող գյուղատնտեսության մասով: Ինչ վերաբերում է ինքնահոս համակարգերին, ապա այս պարագայում մերժման պատճառը նախագծերում առկա անճշտություններն են: Բնականաբար ՀՄԿ-ն ցանկություն չունի կրճատել Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի ծավալները, սակայն եթե մրցութային փաստաթղթերը, մասնավորապես՝ նախագծերը հավուր պատշաճի պատրաստված չեն, ապա ՀՄԿ-ն իրեն իրավունք է վերապահում չֆինանսավորելու այդ ծրագրերը: Մեկ տարուց ավել է ՀՄԿ-ն և ՀՄՀ-Հայաստանը համատեղ աշխատում են այդ նախագծերի վերանայման ուղղությամբ, սակայն եթե ՀՄԿ-ն շարունակի թույլ տալ այդ վերանայման գործընթացը, ապա վտանգի տակ կդնի նաև մյուս ինքնահոս համակարգերի կառուցումը:

Արման Ոսկանյանը նշեց, որ կառավարման խորհրդի նախորդ նիստում ՀՀ Կառավարությունը նշել էր այն պայմաններն ու միջոցները, որոնք պատրաստ է իրականացնել՝ ամբողջ ծրագիրը Համաձայնագրով նախատեսված ժամկետներում իրականացնելու համար, որոնք, փաստորեն, չեն արժանացել ՀՄԿ-ի ուշադրությանը և հաշվի չեն առնվել:

Ալեքս Ռասինը նշեց, որ պոմպակայանների դեպքում այդ առաջարկները ընդունվել են և նաև հաշվի է առնվել այն փաստը, որ պոմպակայանների դեպքում շինարարական համապատասխան ընկերությունը նաև պարտավոր է իրականացնել պոմպակայանների վերջնական նախագծումը: Այս ամենը հույս է ներշնչում, որ հնարավորություն կլինի ստանալ որակյալ նախագծեր և իրականացնել պոմպակայանների վերականգնումն ամբողջ ծավալով:

Արա Հովսեփյանը համաձայնվեց, որ նախագծերը անթերի չեն, սակայն ՀՄՀ-Հայաստանը երկար ժամանակ և ջանքեր է ծախսել դրանց վերանայման ուղղությամբ և ըստ էության պատասխանել է ՀՄԿ-ին հուզող բոլոր հարցերին: ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ում համոզմունք կար, որ բոլոր հարցերի պատասխանները տրված են և բոլոր խնդիրները պարզաբանված: Համատեղ աշխատանք է տարվել նաև ինչպես նախագծող կազմակերպությունների, այնպես էլ այլ ընկերությունների հետ և ՀՄԿ-ին է ներկայացվել տնտեսական ցուցանիշների վերաբերյալ առկա հարցերի մասին պատասխան: Ըստ էության լավագույն լուծումը կլիներ, եթե որևէ անկախ երրորդ կողմ ուսումնասիրեր նախագծերը, ՀՄԿ-ի դիտողություններն ու հուզող խնդիրները, ՀՄՀ-Հայաստանի պատասխաններն ու առաջարկները, սակայն ցավոք ժամկետները սուղ են:

Արման Ոսկանյանն առաջարկեց, որ այդ ամենն ուսումնասիրվի հենց ՀՄԿ-ի ինժիներների կողմից, այն մարդկանց, ովքեր բարձրացնում են այդ խնդիրները և մերժում ինքնահոս համակարգերի կառուցումը:

Ալեքս Ռասինը հայտնեց, որ վերջին ինը ամիսների ընթացքում ՀՄԿ-ի ինժիներները ՀՄՀ-Հայաստանի հետ սերտ համագործակցում են ինքնահոս համակարգերի հարցով: Ըստ էության բոլորն են ուզում, որպեսզի շատ բան կառուցվի, սակայն հարցն այն է, թե եղած ժամկետներում և տեղեկատվությամբ ի՞նչ է հնարավոր անել:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը հարցրեց, թե արդյո՞ք կա ռիսկ, որ ՀՄԿ-ն ծրագրում մնացած չորս ինքնահոս համակարգերի կառուցումն էլ հետագայում մերժի:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ միանշանակ պատասխանել չի կարող, քանի որ ի վերջո ՀՄԿ-ին իրավունք է վերապահված չհաստատելու ցանկացած պայմանագիր:

Քննարկումներից հետո **միաձայն որոշվեց՝** ի գիտություն ընդունել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի շրջանակներում յոթ ինքնահոս համակարգերի կառուցման մրցութային փաստաթղթերի վերաբերյալ ստացված ՀՄԿ առարկությունների նամակը և ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված տեղեկանքը:

Օրակարգի 3-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Արա Հովսեփյանը ներկաներին հիշեցրեց, որ կառավարման խորհրդի նախորդ նիստի ընթացքում քննարկվել էր Թալինի և Արմավիրի մայր ջրանցքների վերականգնման աշխատանքները Համաշխարհային բանկին հանձնելու հարցը և ՀՄՀ-Հայաստանին հանձնարարական էր տրվել այս հարցի շուրջ աշխատել ՀՀ Ջրային տնտեսության պետական կոմիտեի և Համաշխարհային բանկի հետ:

Ի կատարումն վերոգրյալի, ՀՄՀ-Հայաստանը համագործակցել է նշված մարմինների հետ և, ստանալով ՀՄԿ-ի համաձայնությունը, Թալինի և Արմավիրի մայր ջրանցքների շինարարությունը՝ համապատասխան նախագծերով հանձնել է Համաշխարհային բանկին:

Անդրանիկ Անդրեասյանը նշեց, որ կառավարման խորհրդի նույն օրը տեղի է ունենալու Համաշխարհային բանկի խորհրդի նիստ, որի ընթացքում քննարկվելու է նաև այս հարցը: Ըստ էության ներկայումս աշխատանքներն ընթանում են ըստ նախատեսված ընթացակարգերի:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ Թալինի և Արմավիրի մայր ջրանցքների վերականգնման աշխատանքների փոխարեն ներկայում ՀՄՀ-Հայաստանը կիրականացնի մյուս չորս մայր ջրանցքների առաջին և նաև երկրորդ հերթի աշխատանքները՝ ինչպես նախատեսված է վերանայված ծրագրում և ներկայացված է համապատասխան տեղեկանքում, այսինքն՝ ընդհանուր առմամբ մայր ջրանցքների երկրորդ փաթեթի ծավալները չեն փոխվի:

Քննարկումներից հետո **<u>միաձայն</u> որոշվեց՝** հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի շրջանակում ընդգրկված Արմավիրի և Թալինի մայր ջրանցքներում իրականացվող շինարարական աշխատանքների իրականացումը Համաշխարհային բանկին փոխանցելու և Չորս մայր ջրանցքների վերականգնման աշխատանքների երկրորդ փաթեթի մեջ ընդգրկված աշխատանքների նոր ծավալների վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:

Օրակարգի 5-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

ՀՀ Վարչապետը հարցրեց, թե ու՞մ հետ է նախատեսվում կնքել այս պայմանագիրը:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ մրցույթի հաղթող է ճանաչվել կոնսորցիումով ներկայացած «Սոցիոսկոպ» հասարակական ուսումնասիրությունների և խորհրդատվության կենտրոն» և «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ-ները:

Արա Հովսեփյանը նաև նշեց, որ քանի որ ճանապարհաշինության ենթածրագիրը դադարեցվում է, ուստի այս ուսումնասիրության ծավալները այդ մասով ևս հնարավոր է նվազեցվեն՝ կատարելով բյուջեի համապատասխան վերանայում:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը հարցրեց, թե ու՞ր են ուղղվելու տնտեսված միջոցները:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ այս մասով դեռևս վերջնական որոշում չկա, սակայն ներկայումս տարվում են հաշվարկներ և ուսումնասիրություններ այս ուղղությամբ:

Քննարկումներից հետո **<u>միաձայն</u> որոշվեց՝** հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի Գյուղական ճանապարհների վերականգնում ենթածրագրի, Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի ենթակառուցվածներ և Ջրից դեպի Շուկա բաղադրիչների գործընթացի որակական գնահատման պայմանագրի նախագիծը՝ համապատասխան ֆինանսական կրճատումներ կատարելու հնարավորությամբ:

Միաժամանակ **միաձայն որոշվեց** հանձնարարել ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ին կառավարման խորհրդի հաջորդ նիստի ընթացքում ներկայացնել տեղեկատվություն առկա խնայողությունների ծախսման ուղղությունների վերաբերյալ:

Օրակարգի 6-րդ հարցի ա/ կետը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գյուղական ճանապարհների վերականգնման ծրագրի ղեկավար Հակոբ Պետրոսյանը:

ՀՀ Վարչապետը խնդրեց պարզաբանել, թե ինչո՞վ է հիմնավորվում այն փաստը, որ այլ, մասնավորապես՝ Եվրոմիության անդամ երկրներում հիմնավոր է կառուցել բետոնի ճանապարհներ, իսկ ՀՀ-ում այն տնտեսապես հիմնավոր չէ և ի՞նչ արժի եվրոպական ստանդարտներով կառուցված մեկ կմ բետոնի և մեկ կմ ասֆալտի ճանապարհը:

Ներսես Երիցյանը ներկայացրեց, որ 4 գիծ ունեցող 1կմ բետոնի ճանապարհի կառուցումը, առանց կամուրջների և թունելների, եվրոպական ստանդարտներով կառուցելու դեպքում կարժենա մոտ 4-5 մլն. ԱՄՆ դոլար, մինչդեռ ներկայումս գործող ստանդարտներում 1կմ ասֆալտե ճանապարհի կառուցումը արժի մոտ 1 մլն. ԱՄՆ դոլար: Միաժամանակ նշվեց, որ եվրոպական ստանդարտներով կառուցված ասֆալտի ճանապարհը մոտ 30%-ով ավելի էժան է քան նույն ստանդարտներով կառուցված 1կմ բետոնի ճանապարհը:

Հակոբ Պետրոսյանը նշեց, որ այդպիսի համեմատություն անելու համար պետք է հաշվի առնվեն տեղանքային պայմանները, քանի որ, օրինակ՝ հարթավայրերում այդպիսի ճանապարհների կառուցումը մի քանի անգամ կարող է ավելի էժան լինել, քան նույն ճանապարհի կառուցումը լեռնային գոտիներում:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը ի գիտություն ընդունեց այն փաստը, որ առաջարկվում է այս հարցի կապակցությամբ կատարել լուրջ ուսումնասիրություն, սակայն նշեց, որ ներկայումս առաջնահերթ է հանդիսանում ներկայացնել այն տեղեկատվությունը, որը հասանելի է և հնարավոր է ձեռք բերել և ներկայացնել սեղմ ժամկետներում՝ առանց հավելյալ ֆինանսական ռեսուրսների և մասնագետների ներգրավման:

Արա Հովսեփյանը պատրաստակամություն հայտնեց մյուս նիստում ներկայացնել ավելի հստակ տեղեկատվություն առաջ քաշված հարցերի վերաբերյալ:

Քննարկումներից հետո **միաձայն որոշվեց** ի գիտություն ընդունել Հայաստանի Հանրապետությունում ճանապարհաշինության բնագավառում եվրոպական ստանդարտների անցման համար անհրաժեշտ ուսումնասիրությունների իրականացման ժամկետների և գումարների վերաբերյալ տեղեկատվությունը:

Օրակարգի 6-րդ հարցի բ/ կետը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը հարցրեց, թե ո՞վ պետք է տրամադրի վերաբնակեցման/հողի առգրավման համար անհրաժեշտ գումարները:

Արա Հովսեփյանը պատասխանեց, որ այդ պարտավորությունը Համաձայնագրով դրված է ՀՀ Կառավարության վրա:

Արմեն Գևորգյանն առաջարկեց օգոստոսի 15-ը սահմանել որպես վերաբնակեցման/հողի առգրավման գործընթացի ավարտման վերջնաժամկետ և միաժամանակ ամրագրել, որ ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը պարտավորվում է մինչև հունիսի 30-ը ՀՀ Կառավարությանը ներկայացնել տեղեկատվություն, թե ինքնահոս համակարգերի կառուցման գոտում քանի հողակտոր է առկա, քանի սեփականատեր և ինչ գումարի մասին է խոսքը:

Քննարկումներից հետո **միաձայն որոշվեց** ի գիտություն ընդունել ՀՄՀ-Հայաստան ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում

շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ հողի առգրավման գործընթացի առաջընթացի վերաբերյալ տեղեկատվությունը և որպես վերաբնակեցման/հողի առգրավման վերջնաժամկետ սահմանել 2009թ. օգոստոսի 15-ը:

ՀՀ Վարչապետը ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ին հանձնարարեց կառավարման խորհրդի մյուս նիստում ներկայացնել ինքնահոս համակարգերի քարտեզները՝ նշելով, թե մասնավոր սեփականություն հանդիսացող որ հատվածներում հնարավոր է կառուցել փակ տեսքով ինքնահոս համակարգեր, ներկայացնելով նաև բաց և փակ համակարգերի գումարային տարբերությունները՝ նշելով ինքնահոս համակարգերի երկարությունը և մասնավոր տնտեսությունների չափերը:

Արման Ոսկանյանը հայտնեց, որ ՀՄՀ-Հայաստան ծրագրի շահառուների խորհուրդը չափազանց մտահոգված է ՀՄՀ-Հայաստան ծրագրի վերջին զարգացումներով: Չնայած այն հանգամանքին, որ ծրագրի ծավալները նվազում են ամերիկյան կողմի նախաձեռնությամբ, այնուհանդերձ ՀՀ բնակչության մոտ ստեղծվում է տպավորություն, որ ծրագիրը չի կատարվում ՀՀ կառավարության կողմից, որն էլ հանգեցնում է տնտեսական բացասական հետևանքների, միաժամանակ նվազեցնելով նաև ժողովրդի վստահությունը ՀՀ կառավարության հանդեպ:

Կարեն Զադոյանը նշեց, որ շահառուների խորհուրդի համար մտահոգիչ էր ՀՄԿ տնօրենների խորհուրդի ս/թ հունիսի 10-ի որոշումը, որի հետ կապված շահառուների խորհուրդը պատրաստել էր ուղերձ՝ ծրագրի բաղադրիչը չկասեցնելու խնդրանքով, որը ԱՄՆ դեսպանի հետ հանդիպման ժամանակ փոխանցվել է, սակայն կարծում ենք որ այն ըստ էության լուրջ չի դիտարկվել, մինչդեռ ՀՄՀ-Հայաստան ծրագրի շահառուների խորհուրդը կազմված է բավականին ծանրակշիռ հասարակական կազմակերպություններից և վերջիններիս դերը ՀՀ ժողովրդավարության կայացման գործում կարող է մեծ լինել և ձայնը պետք է տեղ հասնի և ընդունվի ու գնահատվի:

Հարցերի սպառումից հետո նիստն ավարտվեց:

«ՀԱՁԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ-ՀԱՅԱՍՏԱՆ»
ՊՈԱԿ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ,
ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

Նիստն արձանագրեց՝
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու,
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման Խորհրդի քարտուղար
Ն. Մարտիրոսյանը